Քննությունը՝ որպես տաղանդի դրսեւորում



ՀՀ կրթության եւ գիտության նախարար **Արմեն Աշոտյանը** ՀՀ նկարիչների միությունում մասնակցել է Գեղարվեստի պետական ակադեմիայի 2014 թվականի շրջանավարտների դիպլոմային աշխատանքների պաշտպանությանը՝ *«Համակարգչային նախագծում եւ կերամիկա»* մասնագիտության գծով: Նախարարը շրջել է ցուցասրահներում, ծանոթացել շրջանավատների ավարտական աշխատանքներին, ինչպես նաեւ ներկա գտնվել ներկայացված աշխատանքների պաշտպանությանը: Քննությունից հետո նախարարը լրագրողների հետ կիսվել է իր տպավորություններով՝ նշելով. *«Առաջին անգամ չէ, որ ես ներկա եմ գտնվում Գեղարվեստի ակադեմիայի քննություններին եւ կարող եմ ասել, որ ես միշտ մեծ հաճույքով եմ մասնակցում հենց այս բուհի քննություններին, քանի որ սա այն բացառիկ մասնագիտություններից մեկն է, որի քննությունն իսկապես շատ հաճելի է դիտել: Ակնհայտ է, որ այսօր մենք ունենք բազմաթիվ լավ ուսանողներ եւ շրջանավարտներ այս ոլորտում, եւ ակադեմիայի դասախոսական կազմի մասնագիտական եւ ուսանողների կրթության որակն իրավամբ մրցունակ է տարածաշրջանում: Այսօր մենք կարող ենք փաստել, որ ունենք բազմաթիվ բարձրորակ արվեստագետներ, մասնագետներ, նկարիչներ, քանդակագործներ, մի խոսքով՝ տաղանդավոր երիտասարդություն: Նրանք ժամանակակից են, բայց միաժամանակ՝ ազգային, ստեղծարար են եւ արծագանքում են օրվա խնդրին, այդ օրվա նյարդով են ապրում՝ միաժամանակ գիտակցելով ավանդական, ազգային արժեքի նշանակությունը: Այս քննությունների ընթացքում, կարելի է ասել, ակադեմիայի շրջանավարտներն առիթից օգտվում են՝ իրենց շնորհը եւ տաղանդն ի ցույց դնելու համար: Նրանք մեր ազգային կրթական համակարգի, մեր ազգային մշակույթի արգասիքն են: Արվեստն ամենագլոբալիզացված եւ տրանսազգային ոլորտներից մեկն է. եթե այլ ոլորտներում սահմաններն էլի փլուզվել են, ապա արվեստի բնագավառը առհասարակ սահման չի ճանաչում: Այսօր բազմաթիվ հայ արվեստագետներ արարում են այլ երկրներում, բայց նրանք մեր մշակույթի մի մասն են: Այո՛, կարելի է վստահությամբ ասել, որ մենք մշակույթի նախարարությանն ենք փոխանցում շատ լավ, որակյալ մասնագետներ»,-* նշել է Ա. Աշոտյանը՝ ընդգծելով, որ բուհի շրջանավարտների շատ անուններ արդեն հայտնի են հասարակությանը:

Գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտոր **Արամ Իսաբեկյանն** իր հերթին նշել է, որ բուհի ավարտական պաշտպանություններն ըստ ավանդույթի անցնում են Նկարիչների միության դահլիճներում, եւ ըստ բանախոսի՝ դրանք երբեմն այնքան շատ են, որ տեղ չեն գտնում ցուցասրահներում: *«Ես շատ գոհ եմ մեր բուհի դասախոսների եւ ուսանողների աշխատանքից, որի արդյունքը երեւում է հենց դիպլոմային աշխատանքի ժամանակ: Ես միշտ կրկնում եմ՝ եթե ուզում եք տեսնել բուհի դեմքը, տեսե՛ք նրա ավարտական աշխատանքները եւ որակները»,-* ասել է Ա. Իսաբեկյանը՝ հավելելով, որ պատահական չէ, որ ՀՀ Նախագահի երիտասարդական մրցանակներին 90-ից ավելի տոկոսով արժանանում են Գեղարվեստի ակադեմիայի ուսանողները: